ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունիսի 12-ին ժամը 17:00-ին քաղաք Էջմիածին, Սբ. Մ. Մաշոտցի 0 հասցեում գտնվող Վաղարշապատի համայնքապետարանի վարչականի շենքի առաջին հարկի ավագանու նիստերի դահլիճում հրավիրվել է Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի արտահերթ նիստը, որին մասնակցելու համար ներկայացել են Վաղարշապատ համայնքի ավագանու 10 անդամ, այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը՝ հիմք ընդունելով գրանցման արդյունքները:

Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի արտահերթ նիստին ներկա են համայնքապետարանի աշխատակիցներ, հրավիրված են լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Սմբատյանը:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.3-րդ հոդվածով սահմանված կարգով նիստը գումարվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացնելու և համայնքի ղեկավար ընտրելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավիրված ավագանու նիստին օրենքով սահմանված կարգով կես ժամվա ընթացքում չի ներկայացել նիստ վարողը՝ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետոբսյանը և ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին, ուստի նիստը իրավազոր չէ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդված 3-րդ մասով՝ նիստը համարվում է չկայացած:

Ավագանու նիստն ավարտվեց 2025 թվականի հունիսի 12-ին ժամը 17:30-ին: